ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԾԱՂԿԱՎԱՆԻ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.)
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
TAVUSH REGION
COMMUNITI ADMINISTRATION
OF TSAGHKAVAN(TAUSH REG.)

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

25 օգոստոսի 2016 թ. թիվ 19 - Ն

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 5 անդամներից 3-ը:

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 3 րդ մասով՝ և հիմք ընդունելով «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» ՀԿ -ի նախագահ՝ Մ.Այվազյանի և Տավուշի մարզի Վ.Ծաղկավան համայնքի ղեկավարի միջև կնքված 01.08.2016 թ. «Վ.Ծաղկավան համայնքի բնական արոտների արդյունավետ օգտագործման, կառավարման և բարելավման» ծրագրի շրջանակում «Արոտների հասանելիության ապահովման և արոտների ենթակառուցվածքի բարելավում» ծրագրի իրականացման վերաբերյալ շնորհիր N 12-2016 /Ջ պայմանագիրը՝

Ծաղկավան (Տաուշի շրջ.) համայնքի ավագանին որոշում է.

1. Համայնքի բյուջեի եկամտային մասում ավելացնել «Ռազմավարական Զարգացման Գործակալություն» ՀԿ -ի կողմից շնորհի տեսքով հատկացվող 2 681 442 (երկու միլիոն վեց հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր քառասուներկու) ՀՀ դրամը ,«Վ.Ծաղկավան համայնքի բնական արոտների արդյունավետ օգտագործման ,կառավարման և բարելավման» շրջանակում «Արոտների հասանելիության ապահովման և արոտների ենթակառուցվածքի բարելավում» ծրագրի իրականացման նպատակով:

2. Համայնքի բյուջեի ծախսային մասում՝ գյուղատնտեսություն (4.2.1) բաժին, խումբ, դասում 4111 հոդվածին ավելացնել 2 681 442 (երկու միլիոն վեց հարյուր ութսունմեկ հազար չորս հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ գումար:

Կողմ - 3. դեմ – 0. ձեռնպահ – չկա:

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

1. Սանթուր Գրիգորյան կողմ / /
2. Ալեքսան Հայրապետյան կողմ / /
3. Անդրանիկ Մկրտումյան կողմ / /

ԾԱՂԿԱՎԱՆ (ՏԱՈՒՇԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ